

ԼԵԶՎԱԿԱՆ ԵՆԹԱՇԵՐՏԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ենթաշերտի /սուբստրատի/ տեսությունը լեզվաբանության մեջ առաջացել և զարգացում է ապրել 19-րդ դարի երկրորդ կեսին՝ շնորհիվ Յ. Շուխարդտի և Գ. Ի. Ասկոլու աշխատությունների: Գ. Ի. Ասկոլու աշխատությունների շնորհիվ ենթաշերտի տեսությունը տարածում է գտել ոչ միայն Իտալիայի, այլև արևմտաեվրոպական այլ երկրների լեզվաբանների գործերում: Ենթաշերտի տեսությունը լայն կիրառություն է գտնում հարցերում, որոնք վերաբերում են հնչյունական և քերականական այն երևույթներին, որ շեղվում են պատմահամեմատական մեթոդի կիրառությամբ վերականգնված ձևերից: Ուսումնասիրելով ռոմանական լեզուները՝ Գ. Ասկոլին դրանց ծագումը հնարավոր է համարում բացատրել տվյալ լեզվով խոսող ժողովրդի առաջացման պայմաններով, և սրա հետ կապված՝ հանգում է ենթաշերտի տեսությանը՝ առաջ քաշելով եթնական գործոնի կարևորության գաղափարը: Այսինքն, ըստ Գ. Ասկոլու, լեզվական շատ երևույթներ հնարավոր կլինի բացատրել այն դեպքում միայն, երբ մանրամասն ուսումնասիրվի տվյալ ժողովրդի ծագումը, զարգացումը, անցած ողջ ուղին: 1854 թվականին առաջին անգամ առաջարկած իր այս տեսությունը նա հետագայում մշակման է ենթարկում և կատարում առաջին կոնկրետ փորձը ռոմանական որոշ կարգի հնչյունական փոփոխություններ այլալեզու ենթաշերտի ազդեցությամբ բացատրելու ուղղությամբ. այսպես՝ լատիներեն հետնալեզվային շրթնային ձայնավոր ս-ի՝ ֆրանսերենում, հյուսիսային իտալերենում և ռետոռոմաներենում առաջնալեզվային (ս)-ի փոխվելը նա բացատրում է կելտական ենթաշերտի ազդեցությամբ, լատինական ֆ-ի՝ իսպաներենում և Գասկոնի շրջանում հ-ի փոխվելը՝ իբերական ենթաշերտի ազդեցությամբ և այլն¹: Այսինքն՝ առաջին անգամ ցեղակցական կապերից շեղվող, լեզվի հնչյունական համակարգի զարգացման ներքին օրինաչափություններով չբացատրվող երևույթների այլալեզու ենթաշերտով մեկնաբանման փորձ է արվում: Առաջին անգամ, քանի որ լեզուների փոխազդեցության, խառնման մասին ընդհանուր դրույթներ արտահայտվել էին ավելի վաղ:

¹ G. J. Ascoli, Prima lettera glottologica, "Privista di filologia e d'istruzione classica", x, 1882, Due recenti lettere glottologiche, "Archivio glottologico italiano" X, 1886-1888.

3. Շուխարդտն իր աշխատություններում լեզվի փոփոխության կարևոր գործոն է դիտում լեզուների խաչավորումն ու խառնումը: Ի տարբերություն իր ժամանակի հայտնի լեզվաբան Մաքս Մյուլլերի, որի կարծիքով խաչավորված լեզուներ գոյություն չունեն, 3. Շուխարդտը պնդում էր, որ, ընդհակառակը, «չխաչավորված լեզուներ գոյություն չունեն»:²

Տարբերելով լեզվական փոփոխությունների երկու տիպ՝ ներքին և արտաքին (խառնուրդ)՝ Շուխարդտը ոչ միշտ է հնարավոր համարում լուծել այս կամ այն փոփոխության՝ որ կատեգորիային պատկանելու հարցը: Լեզուն դադարում է ապրել, բայց նրա որոշ հատկություններ կարող են գոյատևել նրան փոխարինման եկած լեզվի մեջ: Հնչյունական փոփոխությունների պատճառները որոնելով ընդհանրապես խաչավորման, խառնման ու փոխազդեցության մեջ՝ Շուխարդտն այդ պրոցեսն առնում է ավելի լայն իմաստով. լեզվական խառնուրդ, ըստ նրա, տեղի է ունենում ոչ միայն էթնիկական խառնուրդի ժամանակ, որը նրա կարծիքով ավելի հաճախադեպ երևույթ է, քան կարծում են, այլև սերտ կապ ունեցող հաղորդակցական հանրությունների միջև.

1. «Մի կողմից յուրաքանչյուր նշանավոր կենտրոնում բնակչության հոսունությունը ձեռք է բերում այնպիսի չափեր, որ այն կարելի է դիտել որպես յուրատեսակ խառնուրդ,

2. Մյուս կողմից՝ բոլորովին էլ բացառիկ չէ այն դեպքը, որը Պաուլը համարում է լեզվական խառնուրդի միակ հնարավոր նախադրյալը, այն է՝ «երբ առանձին պատմական պատճառների հետևանքով մարդկանց մեծ խմբեր ելել են բնակության վայրերը և խառնվել ուրիշների հետ»:³

Այսինքն՝ կարելի է ասել, որ փաստորեն 3. Շուխարդտն այստեղ խոսում է ոչ միայն տարբեր լեզուների, այլև միևնույն լեզվի տարբեր բարբառների խառնման հնարավորության մասին:

Անդրադառնալով լեզվի բառային կազմին՝ նա ուշադրություն է դարձնում էլզասի տարածքում գործածվող լեզվում մեծ թվով գերմաներեն բառերի առկայության փաստի վրա և հարցնում, թե արդյո՞ք պետք է այն փաստը գերմաներեն լեզվի հաղթանակի նշան համարել, թե՞ հակառակը, գերմաներեն այս բառերը էլզասի տարածքում գործածվող լեզվում պետք է դիտել որպես ֆրանսերենի կողմից «գերված» բառեր: Հասկանալով հարցի լուծման դժվարությունը՝ Շուխարդտը պնդում է, որ, այնուամենայնիվ, պարզ է միայն մի բան. այնտեղ, որտեղ նույն տարածքում, նման պայմաններում պայքարում են երկու լեզուներ,

² Г.Шухардт "Избранные статьи по языкознанию", М. 1950г., стр. 177.

³ Նույն տեղում, էջ.35:

Նրանցից կհաղթի այն լեզուն, որն ավելի շատ բառեր կվերցնի մյուսի բառային ֆոնդից: Այսպիսով, ըստ Շուխարդուտի, փոխառնված բառերը ոչ թե քայքայում են նոր լեզուն, այլև հարստացնում են այն:

Փաստորեն, արդեն 19-րդ դարում ենթաշերտի պրոբլեմն ուսումնասիրող լեզվաբանների աշխատություններում միտում է նկատվում ընդհանուր դրույթներից անցումը դեպի ավելի կոնկրետ փաստերին, այսինքն փորձ է արվում բացատրել հնչյունական համակարգի զարգացման ներքին օրինաչափություններից շեղվող երևույթների բառային ֆոնդում ի հայտ եկած օտար բառերի առաջացման պատճառները:

20-րդ դարում ենթաշերտի տեսությունն ավելի է զարգացվում: Ենթաշերտ ասելով հասկանում են հաղթած լեզվի ներդրումը հաղթող լեզվի մեջ: Ավելին, ենթաշերտը դիտվում է ոչ միայն հիմնալեզվից լեզվի հեռանալու պատճառ, այլև նրա հետագա զարգացումը որոշող գործոն: Ենթաշերտի՝ որպես լեզվի զարգացման ուղիները որոշող գաղտնի գործող ուժի մասին կարծիքը շարունակում է քննարկվել ինչպես արևմտաեվրոպական լեզվաբանների՝ առանձին լեզուների մասին աշխատություններում, այնպես էլ՝ լեզվի տեսության մասին ընդհանուր աշխատություններում: Եվ սա բերում է նոր՝ «սուպերստրատ» (տերմինն առաջին անգամ գործածել է 1936թ-ին Վարտուկյանը) և «ադստրատ» (տերմինն առաջին անգամ գործածել է Մ. Բարտոլին 1939թ-ին) տերմինների առաջացմանը:

Մակաշերտ (սուպերստրատ) տերմինի տակ առաջարկվում է հասկանալ եկվորների լեզվի ներդրումը բնիկների լեզվի մեջ, իսկ առշերտ (ադստրատ) տերմինը նշանակում է գոյակցող և խառը բնակչություն կազմող տարածքների լեզվական փոխազդեցությունը⁴:

Սակայն, սրա հետ մեկտեղ, քիչ չէին այն լեզվաբանները, որոնք սահմանափակում էին ենթաշերտի դերը լեզվական փոփոխությունների բացատրման գործում: Նրանք կարծում էին, որ այս տեսությունը բավարար չէ մեկնաբանելու համար այն ամենը, ինչը փորձում էին անել տեսության կողմնակիցները: Այդպիսի լեզվաբաններից էին Օ. Յեսպերսենը, Յ. Վան-Դամը, Մարտինեն, Սովա-ժոն, Ուոտմարֆը և այլք:

Հատկանշական է, որ ենթաշերտի խնդրին անդրադարձող բոլոր լեզվաբանները նշում են, որ լեզվական ենթաշերտի մասին կարելի է խոսել այնտեղ, որտեղ տեղի են ունեցել այսպես կոչված «ցնցումներ», երբ տվյալ վայրում

⁴Տերմինների հայերեն թարգմանությունը տվել է Գ.Ջահուկյանը, տես Ջահուկյան «Հայերենի անհայտ ծագման բառարմատները» ՊԲՀ. 1986 N1:

հայտնվել են բնակչության նոր կամ օտար խավեր: Այսպես, Ա. Մեյեն գրում է. «Ամենուր, որտեղ կա տարբեր ծագում ունեցող բնակչություն, լեզվական վիճակը դառնում է անկայուն և մեծանում է ազատությունը այն երեխաների համար, որոնք նոր են խոսել սովորում»⁵:

Իսկապես, երեխան, որ նոր է խոսել սովորում, ազատորեն, հաճախ մահ ոչ դիտավորյալ, կարող է «ընտրել» մի լեզվի բառապաշարի մի շարք բառեր, մյուսի քերականական համակարգի մի շարք երևույթներ և այլն, ինչն էլ իր հերթին հող կնախապատրաստի նրա մայրենի լեզվում օտար տարրերի ներթափանցմանը: Իսկ եթե մեծան դեպքերը շատ են լինում /ինչի հավանականությունը մեծ է/, դրանք կամաց-կամաց վերածվում են օրինաչափության:

Հենց սկզբից ենթաշերտի տեսությունը լեզվաբանների կողմից դիտարկվում էր նախևառաջ և գլխավորապես որպես լեզվաբանական տեսություն: Սակայն 1955թ-ին ԽՍՀՄ ԳԱ-ի կողմից ենթաշերտի տեսությանը նվիրված բանավեճի ժամանակ նոր մոտեցում է նկատվում: Մասնավորապես, Վ. Ի. Աբանն իր զեկույցում առաջ է քաշում դրույթ, որի համաձայն ենթաշերտը դիտվում է ոչ միայն որպես մաքուր լեզվաբանական հասկացություն, այլ «... ենթաշերտի երևույթը ենթադրում է էթնոգենետիկական գործընթաց, որն ուղեկցվում է որոշակի լեզվական հետևանքներով»:⁶ Վ. Ի. Աբանը մահ նշում է, որ ենթաշերտի լեզվական հետևանքներն իրենց բնույթով տարբերվում են համեմատական լեզվաբանության կողմից ընդունված երկու այլ միջլեզվական կապերից՝ ազգակցությունից և փոխառությունից: «Ենթաշերտային մասնիկները չեն կարող կոչվել «սեփական», որովհետև չեն պատկանում նախնական համակարգին, կապված չեն նրա ավանդույթների հետ: Բայց նրանք չեն կարող դիտվել մահ որպես «օտար», այսինքն՝ փոխառյալ, քանի որ այդ ընթացքում ոչ մի արտաքին փոխառություն տեղի չի ունենում. ենթաշերտը այն չէ, որ վերցվում է դրսից, այլ այն է, ինչ տվյալ միջավայրը պահպանել է իր նախորդ համակարգից, այն բանից հետո, երբ անցել է նոր համակարգի»⁷:

Ըստ Վ. Ի. Աբանի՝ ենթաշերտի լեզվական հետևանքների տարբերությունը ազգակցությունից և փոխառությունից այն է, որ ենթաշերտը կապված է երկլեզվության հետ: Քանի որ մի լեզվից մյուսին անցնելը բարդ և դժվար մի պրոցես է

⁵A. Meillet, Le problème de la paranté des langues, "Linguistique historique et linguistique générale" Paris, 1921, p. 80.

⁶В.И. Абаев, О языковом субстрате, Доклады и сообщения Института языкознания. АН. СССР, N 9, 1956, стр. 58.

⁷Նույն տեղում, стр. 59.

և ենթադրում է քիչ թե շատ շարունակվող երկլեզվության շրջան, որն էլ իր հերթին նախադրյալներ է ստեղծում բավականին հեռու զնացող խառնման և երկու լեզվական համակարգերի փոխներթափանցման համար: Այս է պատճառը, որ ենթաշերտի լեզվաբանական յուրահատկությունը կարելի է բացատրել երկլեզվության հիման վրա: Ընդ որում, այս շրջանում խոսողների կողմից նոր՝ երկրորդ լեզվին տիրապետելը երբեք կատարյալ և լիարժեք չի լինում: Եվ այս անկատարության պայմաններում խոսողները սկսում են թույլ տալ մի շարք անճշտություններ արտասանության, քերականական կաղապարների գործածության, շարահյուսության մեջ: Այս սխալները օրինաչափ բնույթ են կրում, որովհետև բխում են խոսողների հարազատ լեզվի յուրահատկություններից: Ուրեմն, նշված տեսանկյունից, ըստ Վ. Ի. Աբակի, լեզվական ենթաշերտը դոստորվում է՝ որպես օրինաչափ սխալների ամբողջություն, որ թույլ են տալիս հաղթող լեզվին անցում կատարող պարտված լեզվի կողմները: Ու քանի որ այդ «սխալները» օրինաչափ են, այսինքն պայմանավորված են ենթաշերտ հանդիսացող լեզվի համակարգի առանձնահատկություններով, դրանք կարելի է ուսումնասիրել պատմահամեմատական լեզվաբանության մեթոդներով, քանի որ ենթաշերտային երևույթների վերլուծությունը պետք է կատարել հենց այդ մեթոդներով: Սակայն պետք է նշել, որ հոդվածի հեղինակն ավելացնում է նաև այն միտքը, թե չպետք է մտածել, որ ենթաշերտը միայն սխալներից է կազմված. «Նրա մեջ մտնում է այն ամենը, ինչ տվյալ միջավայրը պահպանում է իր հարազատ լեզվից, երբ չի գտնում դրա համարժեքը յուրացրած լեզվում»⁸:

Ենթաշերտային երևույթները պատմահամեմատական լեզվաբանության մեթոդներով բացատրելու Վ. Ի. Աբակի կարծիքին հակադրվում է Բ. Ա. Սերբերեննիկովը: Ըստ նրա՝ այս տեսությունը կապ չունի պատմահամեմատական լեզվաբանության հետ, և որ պետք է գոյություն ունենա լեզվաբանության մի հատուկ ծյուղ, որը կուսումնասիրի լեզուների փոխազդեցության բազմաթիվ տիպերը: «Լեզվաբանության այս նոր ծյուղը պետք է նոր ուժ տա շատ հնացած պատմահամեմատական մեթոդին և մեծացնի նրա ռեալ հնարավորությունները»⁹: Բ. Ա. Սերբերեննիկովի այս տեսակետը քննադատաբար է ընդունվում լեզվաբանների կողմից: Պատմահամեմատական մեթոդի նկատմամբ այդպիսի թերահավատ մոտեցումն անընդունելի է, քանի որ կասկածի տակ դնել պատմահամեմատա-

⁸Նույն տեղում, ժր. 60.

⁹Բ. Ա. Сербренников, «Проблема субстрата» Доклады и сообщения Института языкознания. АН. СССР, N 9, 1956, ժր. 34.

կան մեթոդը, նշանակում է ընդհանրապես անտեսել պատմական լեզվաբանության գոյությունը:

Բ. Ա. Սերեբրեննիկովն առաջարկում է ուսումնասիրել լեզուների շփման երկու տիպ՝ այսպես կոչված եզրային և ներտարածքային շփումներ: Ըստ նրա՝ «... եզրային շփումը բնութագրվում է երկու լեզուների շփմամբ, որոնցով խոսում են խառը բնակչությամբ բնակեցված տարածքներում: Մի լեզվով խոսող բնակչության զանգվածների խորը ներթափանցում մյուս լեզվի տարածք այս դեպքում տեղի չի ունենում»¹⁰: Շփման մյուս ձևը, այսպես կոչված ներտարածքային շփումը, Բ. Ա. Սերեբրեննիկովը բնութագրում է այսպես. «Ներտարածքային շփումը բնութագրվում է մի լեզվով խոսող մեծաքանակ զանգվածների խորը ներթափանցմամբ մյուս լեզվով խոսողների կողմից զբաղեցրած տարածք»¹¹: Բացի այս, Բ. Ա. Սերեբրեննիկովն առաջարկում է կիրառել նաև «մակրոսուբստրատ» տերմինը, որը կարելի է կիրառել այն դեպքում, երբ բնիկների լեզվով մի շարք առանձնահատկություններ պահպանվում են միանգամից մի շարք լեզուներում:

Բ. Ա. Սերեբրեննիկովի առաջ քաշած եզրային և ներտարածքային շփում տերմինները ոչ բոլորի կողմից են ընդունվել: Ոմանք նույնիսկ կարծում են, որ այս տերմինները գիտականորեն հիմնավորված չեն:

Սենք կարծում ենք, որ Բ. Ա. Սերեբրեննիկովի կողմից առաջարկված «եզրային շփումը» նույնանում է առջերտի հետ, իսկ «ներտարածքային շփումը»՝ մակաշերտի հետ: Երկու տերմինների գործածության ժամանակ էլ առաջին դեպքում հասկանում են խառը բնակչություն կազմող տարածքների լեզվական փոխազդեցությունը, իսկ երկրորդ դեպքում՝ եկվորների լեզվի ներդրումը բնիկների լեզվի մեջ:

Ենթաշերտի տեսության զարգացման հետ միասին առաջ էին գալիս տարբեր տեսակետներ, համաձայն որոնց հաղթված լեզուն իր հետքերը կարող էր քողնել հաղթող լեզվի այս կամ այն համակարգի վրա:

Այսպես, Պոկոմյեն պնդում էր, որ լեզուների խառնման ժամանակ «հաղթողները» պահպանում են իրենց բառապաշարը, իսկ ձևաբանությունն ու հնչյունաբանությունը տալիս են «հաղթվածները»¹²: Սրան հակառակ, համեմատաբանների կարծիքով լեզուն նախևառաջ ձևաբանական համակարգ է, որը չի կարող:

¹⁰ Նույն տեղում, սրբ. 36.

¹¹ Նույն տեղում, էջ 36:

¹² J. Pokorny, Day nichtindogermanische Substrat in Trischen, «*Ls. f. celt. Philologie*» 12, 1927, p.141.

համաժին չլինել: Այսպես, Ա. Մեյեի կարծիքով հնչյունաբանությունը և քերականությունը կազմում են փակ համակարգեր և, ընդհակառակը, բառային ֆոնդը համակարգ չի կազմում: Գրեթե նույն կարծիքի էին կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները, որոնք նույնպես կարծում էին, որ բառային ֆոնդը չի կազմում այնպիսի միասնա ու կապակցված համակարգ, ինչպես հնչյունաբանությունն ու ձևաբանությունը: Այդ պատճառով այստեղ (բառային ֆոնդում) ավելի հեշտ են ներթափանցում օտար միավորներ, քան ձևաբանական և հնչյունաբանական համակարգերում: Զևաբանությունը չի կարող լինել ենթաշերտի ազդեցության ոլորտ: Երկու տարբեր ձևաբանական համակարգերի միավորում չի կարող լինել, նրանք կարող են միայն բացառել մեկը մյուսին: Այդ է պատճառը, որ Յ. Պոկոռնու կարծիքով ձևաբանությունն ամբողջապես վերցվում է հաղթող լեզվից: Իսկ ահա Ա. Սեյսը կարծում էր, որ քերականական համակարգերի խառնումն անհնարին է այն պատճառով, որ ըստ նրա, քերականությունն անմիջականորեն կապված է տվյալ լեզվով խոսողի մտածողության տիպի հետ¹³: Այսպիսով, կարելի է ասել, որ 19-րդ դարում լեզվաբանության մեջ իշխում էր այն տեսակետը, որ ենթաշերտի ազդեցությունը կարելի է տեսնել լեզվի բառային ֆոնդում, իսկ քերականական համակարգը բացառում է որևէ ազդեցություն:

20-րդ դարում, սակայն, կարծիքները փոխվում են, ինչը կապված էր լեզուն՝ որպես ամբողջական համակարգ դիտելու տեսակետի հետ: Այսպես արդեն դարասկզբին Ա. Սոմմերֆելտը գրում է, որ բառերի քերականական իմաստի ոլորտում կարող է արտացոլվել լեզվական ենթաշերտի ազդեցությունը: Եիշտ է, նա կարծում է, որ այդպիսի ազդեցության համար ապացույցներ գտնելը շատ դժվար է, քանի որ, ըստ նրա, նման դեպքերում դժվար է որոշել, թե ինչն է համդիսանում ենթաշերտի ազդեցություն, ինչը՝ լեզվի բնական զարգացում և ինչն է որոշվում այդ լեզվով խոսող ժողովրդի պատմությամբ: Սակայն նա հնարավոր է համարում լեզվում ոչ միայն բառակազմիչ, այլև քերականական ձևայինների ներթափանցումը՝ օրինակ բերելով կերտական խմբի կիմերեն (վալլիերեն) լեզվի կողմից գոյականի հոգնակիակերտ —S ցուցիչի վերցնելը անգլերենից¹⁴: «Այսպիսով՝ արդեն Ա. Սոմմերֆելտի մոտ տեսնում ենք ձևաբանական ցուցիչների խառնման հնարավորության բացատրելու փորձ, ինչը 19-րդ դարում մերժվում էր: Սակայն 20-րդ դարում ենթաշերտի պրոբլեմով զբաղված գրեթե բոլոր լեզվաբանների աշխատություններում ձևաբանությունը միշտ էլ դիտվել է լեզվի

¹³ A. N. Sayce. *Principles of philology compare'e*. Paris 1893, p.134.

¹⁴ A. Sommerfelt, *Un cas de ränge de grammaires*, Oslo, 2, 1925, p.3-4.

այն ոլորտը, որը գերծ չէ ենթաշերտի ազդեցությունից: Նշենք նաև, որ 19-րդ - դարում ենթաշերտի տեսության կողմնակիցները քիչ էին զբաղվում շարահյուսության հարցերով և շարահյուսական համակարգը նույնպես չէին դիտում որպես ենթաշերտի հնարավոր ազդեցության ոլորտ: Սակայն այս բացը ևս սկսում է լրացվել 20-րդ դարի գիտնականների կողմից, և ենթաշերտի տեսության կողմնակիցները սկսում են ավելի ուշադրություն դարձնել լեզուների շարահյուսական համակարգում ենթաշերտի հնարավոր ազդեցությանը:

Ենթաշերտային երևույթներ առաջանում են նաև մեր օրերում: Այսօր էլ էթնիկապես ոչ միասեռ բնակչությամբ վայրերում տեղի են ունենում լեզուների առշերտային փոխազդեցության օրինակներ՝ հատկապես տեղանունների ոլորտում: Կարծում ենք՝ այս պատճառով ենթաշերտ ասելով չպետք է հասկանալ մեռած, պատմության թատերաբեմից վերացած ազգերի լեզվի ներդրումը մի այլ լեզվի մեջ: Այսպես՝ էթնոլեզվական ենթաշերտի առաջացման ցայտուն օրինակ է պելիմյան և վագիյան մանսիների ծուլումը Անդրուրալի հյուսիսարևելյան շրջանում: 20-րդ դարի սկզբին /1901-1906թթ/ ֆին լեզվաբան Ա. Կաննիստոն այստեղ գրի է առել մանսիների լեզուն և բանահյուսական տեքստեր, իսկ 1955-56թթ. ռուս հեղինակ Ա. Կ. Մատվենը այս տարածքում չի գտնում զոհն մեկ հոգու, որ խոսեր մանսիերեն, թեև հանդիպել է մանսիների շատ սերունդների, որ ունեցել են շատ բնորոշ մարդաբանական տեսք: Տեղանունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այս շրջանի աշխարհագրական անվանումների մեջ շատ են մանսիական ենթաշերտային ծագում ունեցող ջրանուններն ու տեղանունները, բառապաշարում նույնպես առկա են դարձյալ ենթաշերտային ծագում ունեցող առօրյա գործածական բառեր¹⁵: Եվ այսպիսի օրինակները շատ են բոլոր այն վայրերում, որտեղ տեղի է ունենում բնակչության ծուլման գործընթաց. վերջինիս անպայման նախորդում է տևական երկլեզվության շրջանը և ապա՝ մի լեզվի աստիճանական ծուլումը մյուսին: Այսինքն կարող ենք ասել, որ մեր օրերում նույնպես կարող ենք խոսել ենթաշերտի հնարավոր ազդեցության մասին, եթե այն հիմնվում է մի ամբողջ շարք փաստարկների վրա, որոնց մեջ մտնում են.

1. հնչյունական համակարգում մի շարք հատկանիշների ի հայտ գալը, որ բնորոշ չեն լեզուների այն խմբին, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն,

¹⁵ Глинских Г.В. "Мансийские субстратные топонимы в русских говорах по р. Тавде. Этимология русских диалектных слов, Свердловск, 1978.

բայց եղել են այն լեզվում կամ լեզուներում, որոնք մի շարք պատճառներով¹⁶ կարելի է ենթաշերտ համարել տվյալ լեզվի համար,

2. ձևաբանական և շարահյուսական համակարգերում առանձնահատուկ գծերի ի հայտ գալը, որը հատուկ չէ ազգակից լեզուներին, բայց եղել են այն լեզվում կամ լեզուներում, որոնք մի շարք պատճառներով կարելի է ենթաշերտ համարել տվյալ լեզվի համար,

3. հիմնական բառաֆոնդին պատկանող նոր բառերի ի հայտ գալը, որոնք հատուկ չեն ազգակից լեզուներին, բայց եղել են այն լեզվում կամ լեզուներում, որոնք մի շարք պատճառներով կարելի է ենթաշերտ համարել տվյալ լեզվի համար,

4. ընդհանուր տեղանունների կամ միևնույն տիպի տեղանունների անպայման առկայությունը, որ եղել են այն լեզվում կամ լեզուներում, որոնք մի շարք պատճառներով կարելի է ենթաշերտ համարել տվյալ լեզվի համար:

Վերջին, չորրորդ խմբի մասին խոսելիս նշենք, որ կան հեղինակներ, որ կարծում են, թե միայն տեղանունների բնագավառում պահպանված ենթաշերտի հետքերն էլ բավական են՝ տվյալ լեզվում ենթաշերտի առկայության մասին խոսելու համար: Ռուս հայտնի լեզվաբան Ա. Մատվենը¹⁷ հոդվածների մի ամբողջ շարք ունի նվիրված ռուսերենում ենթաշերտային ծագման տեղանունների ուսումնասիրությանը: Կան տարածքներ, որտեղ ենթաշերտը պահպանվել է միայն տեղանուններում, իսկ տվյալ լեզվի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի մնացած մասի մեջ ենթաշերտի հետքեր չեն նկատվում: Սա հիմք է տալիս հեղինակին հակադրելու տեղանունների ենթաշերտը ընդհանուր լեզվական ենթաշերտին՝ փաստորեն ընդունելով ավելի վաղ ռուս մի այլ լեզվաբանի՝ Ռ. Ա. Ագենի առաջարկած միտքը՝ «տեղանունների ենթաշերտը լեզվական ընդհանուր ենթաշերտից տարբեր երևույթ է»¹⁸: Այսինքն՝ հարուստ տեղանվանական ենթաշերտը բոլորովին էլ չի պայմանավորում ենթաշերտային տարրերի առկայությունը յուրացնող լեզվի հնչյունական, ձևաբանական և շարահյուսական համակարգերում:

¹⁶Սյր պատճառների տակ պետք է հասկանալ պատմության, ազգագրագիտության, հնագիտության, մարդաբանության և այլ գիտությունների հաղորդած լրացուցիչ տեղեկությունները.

¹⁷А.К. Матвеев, "Субстрат и заимствование в топонимике", ВЯ 1993, N 3, стр. 91. Նայել այս հոդվածի գրականության ցանկը:

¹⁸Агеев Р.А. "Гидрономия псковских и новгородских земель в свете истории заселения края", Автореф. дис-9-канд. фил. наук. М. 1973. стр. 18.

Սա նաև հիմնավորվում է այն փաստով, որ շնորհիվ տեղանունների յուրահատկության (համեմատական կայունություն, գործառական սահմանափակություն և տարածքային կցվածություն) տեղանվանական ենթաշերտն ավելի հարմարեցված է իր առանձնահատկությունները օտար միջավայրում պահպանելուն: Այս պատճառով է, որ ենթաշերտի հետքերը ավելի ցայտուն են արտահայտվում տեղանունների ոլորտում և հատկապես այն լեզուների, որոնք պատկանում են հեռավոր ցեղակցությամբ կապվող լեզվախմբերի կամ էլ ընդհանրապես չեն պատկանում ցեղակից լեզուների (ուրարտական տոպոնոմիկան Հայաստանում, սլավոնական տոպոնոմիկան Գերմանիայում և այլն):

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ ենթաշերտի տեսությունը, ունենալով շուրջ հարյուր հիսուն տարվա պատմություն, այսօր էլ մնում է արդիական: Պետք է ասել, որ խնդրի ուսումնասիրման համար նոր շրջան սկսվեց անցած դարի հիսունական թվականներից, երբ մասնավորապես հայտնի լեզվաբան Վ. Ի. Աբակի կողմից առաջ քաշվեց դրույթ, որի համաձայն ենթաշերտը սկսեց դիտվել ոչ միայն մաքուր լեզվաբանական երևույթ, այլև էթնոգենետիկական մի պրոցես, որն ուղեկցվում է որոշակի լեզվական հետևանքներով: Այսինքն սրանով ենթաշերտը սկսվեց դիտարկվել ոչ միայն լեզվաբանության, այլև հնագիտության, պատմության, մարդաբանության, ազգագրագիտության և այլ գիտությունների համապարփակ ուսումնասիրություն պահանջող երևույթ:

Ենթաշերտի տեսությունը շարունակում է արդիական մնալ նաև այն պատճառով, որ «անենթաշերտ տարածքների առկայությունը կասկածելի է կամ այդպիսի տարածքները շատ հազվադեպ են»¹⁹:

¹⁹ Трубачев О.Н. "Этногенез и культура древнейших славян". Лингвистические исследования. 1991, стр.15.